## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

### ԷԱՃԾՁԲ-ԱԻՆ-19/5 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

**ք. Երևան** **«10»«01»2019թ.**
**ժամը՝ 14:30**

**Մասնակցում էին՝**
**Հանձնաժողովի նախագահ՝**
ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման պատասխանատու՝ **Ա. Մեսրոպյան**:

**Հանձնաժողովի անդամներ ՝**
ԱԻՆ ՓԾ օպերատիվ կառավարման վարչության պետի տեղակալ **Տ.Պետրոսյան**:
ԱԻՆ ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսաբյուջետային բաժնի պետ՝ **Ա.Մկոյան**:
**Հանձնաժողովի քարտուղար՝**
ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության փորձագետ՝ **Ա. Մարգարյան**:

ԷԱՃԾՁԲ-ԱԻՆ-19/5 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց ձեռքբերվող ծառայության նախահաշվային գինը մեկ թվով արտահայտված՝

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | նախահաշվային գինը /դրամ/ |
|---|---|---|
| 1 | հանրային հեռախոսային ծառայություններ(գերատեսչական ցանց) | 12 508 680 |

1. **Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**
«ԷԱՃԾՁԲ-ԱԻՆ-19/5» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային www.eauction.armeps.am համակարգի միջոցով բացվել են Արտակարգ իրավիճակների նախարարության շենքում ք.Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ., Ա.Միկոյան 109/8 հասցեում:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և գտնվելու վայրերի հասցեները.**

| N/N | Մասնակցի անվանումը | հասցեն |
|---|---|---|
| 1 | Յուքոմ ՍՊԸ | ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի փողոց 9 |
| 2 | Վեր ՍՊԸ | ք. Երևան, Կոմիտասի պող., 60 շենք |

**Կողմ՝ 3, դեմ՝ 0**

3. **Տվյալներ՝ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

**Կողմ՝ 3, դեմ՝ 0**

4. **Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

**ԵԱՃԾՁԲ-ԱԻՆ-19/5** ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի շրջանակներում մասնակիցները ներկայացրել են անհրաժեշտ փաստաթղթերը:

**Կողմ՝ 3, դեմ՝ 0**

5. **Մասնակիցների առաջարկած գները.**

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Մասնակցի անվանումը | Վերջին առաջարկ | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գումար |
| 1 | հանրային հեռախոսային ծառայություններ (գերատեսչական ցանց) | Յուքոմ ՍՊԸ | 9 250 000 | 20 % | 11 100 000 |
| | | Վեբ ՍՊԸ | 13 000 000 | 20 % | 15 600 000* |

*էլեկտրոնային աճուրդների իրականացումն ապահովող www.eauction.armeps.am համակարգը ավտոմատ եղանակով մերժել է նախահաշվային գները գերազանցելու հիմքով:

6. **Տվյալներ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հարցումներ չեն ստացվել:

7. **Հանձնաժողովը որոշեց՝**

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշման հավելված 1-ի 17-րդ կետը:

**ա)** «Յուքոմ» ՍՊԸ-ի ներկայացված հայտը գնահատել բավարար և ճանաչել **ԵԱՃԾՁԲ-ԱԻՆ-19/5** ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշման հավելված 1-ի 19-րդ կետը՝

**ա)** ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

**բ)** ծանուցել առաջին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով սույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները համակարգի միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 2-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում են՝

Հայտը ներկայացնելու տարվա և դրա նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ

ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը.

1. Հաջորդ նիստը գումարել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից տեղակատվության և 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը ստանալուց ոչ ուշ, քան 2-րդ օրը:

**Հանձնաժողովի նախագահ՝** ______________ **Ա. Մեսրոպյան**

**Հանձնաժողովի անդամներ՝** ______________ **Տ. Պետրոսյան**

______________ **Ա. Մկոյան**

**Հանձնաժողովի քարտուղար՝** ______________ **Ա. Մարգարյան**